



“ՔՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ՓԱՆ:” ԴՈՒԿ ԺԸ 16:

ՀԱՏՈՐ ԺԸ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1889

ԹԻԻ 4

ՃԻՆՆԵՎՐԱՅԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ


Այս պատկերը կը ներկայացունէ ձիննվրայի մէկ շէնքը որ կառուցուած է ի յիշատակ կրօնական բարեկարգութեան որ վեշտասաներորդ դարուն տեղի ունեցաւ յիշեալ քաղաքին մէջ: Բարեկարգութիւնն սկսաւ Ռիլերմ ֆարեի ձեռքով, բայց անոր համար գլխաւոր աշխատողն էր ձոն Կարլին անուն Գաղիացին որ ծնաւ 1509 ին: Կարլին իւր հայրենի երկրին մէջ քարոզելէ ետքը ստիպուեցաւ 1536 ին փախչիլ արինահեղ հայաժանքներէն որոց ենթակայ էին Գաղիոյ մէջ անոնք որ յարած էին Բարեկարգեալ եկեղեցւոյն, և եկաւ ձիննվրա իբրև փախստական: Կարլին չունէր դիտաւորութիւն մնալ հոն, վասն զի ինք աւելի կ'ուզէր վայելել ուսանողի մը հանդարտ կեանքը, բայց ֆարէլ բողոքեց անոր դէմ, ըսելով, «Կը յայտարարեմ քեզի, որ եթէ հոս չմնաս օգնել մեզի, Աստուծոյ անէծքը վրադ պիտի թափի:» Կարլին հաւանեցաւ մնալ հոն, ինչպէս ինք ըսաւ յետոյ, «Իբր թէ Յաւիտենականին ձայնին զիջանելով:» Սկսաւ աշխատիլ է ձիննվրա իբրև ուսուցիչ Աստուածաբանութեան, վասն զի Գաղիայէ մեկնելէն առաջ հրատարակած էր «Վարդապետութիւնք Քրիստոնէական կրօնի» անուն գիրքը, որոյ մէջ ցուցած է մեծ հանճար և գերազանց կարողութիւն՝ դրութեան վերածելու Քրիստոնէութեան վարդապետութիւնները: Թերևս բաց ի Աստուածաշնչէն ուրիշ գործ մը անկէ աւելի զօրաւոր ազդեցութիւն ունեցած չէ Բողոքական եկեղեցւոյն մէջ:

Կարլին չուտով համոզուեցաւ որ բաց ի ուսուցանելէ պէտք էր նաև քարոզել. և խուռն բազմութիւնք կու գային լսել անոր քարոզները: Բայց միութեանց դէմ անոր սաստիկ հակառակութիւնը հրաւիրեց իւր վրայ

մոյի և ապականեալ բարոյականի տէր անձանց ատելութիւնը, և անոնց ազդեցութիւնովը 1538 ին ելաւ զնա աքսորելու հրաման մը: Քաշուեցաւ Սթրասպուրկ, բայց նորէն ձիննվրա կանչուեցաւ 1541 ին և ընդունուեցաւ մեծ պատուով, և մնաց հոն մինչև իւր մահը, 1564 ին: Կարլինի ազդեցութիւնն զգացուեցաւ ոչ միայն Չուլցերիս՝ այլ նաև Եւրոպայի բոլոր բա-

“ԱՇԽԱՏԷ ԲՈԼՈՐ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲԻ”

Երիտասարդ պատկերահանի մը վարպետը ըսաւ անոր որ ընցունէր պատկեր մը զոր վարպետն ինք սկսած էր, բայց իւր վատաուղղութեանն հետեւեալ տէ աւելնալուն պատճառաւ կարող պիտի չըլլար շարունակել զայն: «Կը յորդորեմ քեզ ո՛րդեակ», ըսաւ ծերունի պատկերահանը, «որ բոլոր կարողութեամբդ աշխատիս այս գոր-



ընկարգեալ եկեղեցիներուն մէջ: Իւր դարուն ամենէն կարող մարդոց մին էր նա, և այնպիսի անձ մը որ արժանի է պատուով յիշուելու Քրիստոնէայ եկեղեցիէն, իւր փայլուն տաղանդին և իւր անձնուրաց կեանքին համար: Իւր գրական աշխատութեանց ընդարձակութիւնը կրնայ դատուիլ սա իրողութենէն թէ անոր գործերը որ Անգղիերէնի թարգմանուելով հրատարակուեցան, յիսունուերկու հատոր գիրք եղան: Կարլին էր բարի մարդ մը, բայց անոնք որ այսօր կը զմայլին անոր վրայ, կրնան համամիտ չըլլալ անոր հետ իւր քանի մը վարդապետութեանց մասին, և ընդունիլ թէ նա գործեց սխալներ:

ձին վրայ: Աշխատէ բոլոր կարողութեամբդ:» Երիտասարդն այնչափ բարձր ակնածութիւն ունէր դէպ ի իւր վարպետին հանճարը, որ անբաւական համարեցաւ ինքզինք վրձին դպցունել այն կտաւին որուն վրայ նկարուած էր այն համբաւաւոր ձեռքին գործը, և խնդրեց որ իրեն չյանձնէր այնպիսի ծանր գործ մը: Բայց ծերունոյն տուած մեղմ պատասխանն էր, «Աշխատէ բոլոր կարողութեամբդ:» և այնուհետև քանի անգամ որ աշակերտը պատճառանքներ յառաջ կը բերէր գործին ձեռք չզարնելու համար, վարպետը միշտ կը պատասխանէր, «Աշխատէ բոլոր կարողութեամբդ:» Երիտասարդը դողդոջուն ձեռքով առաւ վրձինը

և ճնգաց վրայ գալով իւր սկսելիք գործին առջևը, աղօթեց, «իմ սիրեցեալ վարպետիս սիրոյն համար է որ կը հայցեմ հանճար և կարողութիւն կատարել այս գործը:» Անոր ձեռքը հետզհետէ զորացաւ մինչ կը նկարէր:

Թմրած տաղանդը արթնցաւ անոր աչաց մէջ: Երկիւղին յաջորդեց եռանդ և աշխոյժ: Ինքզինք մտնալով արմատախիլ եղաւ իւր անվատահուժիւնը անձին վրայ, և խաղաղ ու բախուժեամբ լմնցուց իւր աշխատութիւնը: «Միեցեալ վարպետը» իւր անկողնովը բերուեցաւ պատկերահանութեան սենեակը որ պէս զի նկարին վրայ իւր դասաղութիւնը յայտնէր: Երբ նայեցաւ իւր առջևը գտնուած արուեստի յալթանակին վրայ, աչքերը արտասուօք լեցուեցան, և իւր վատոյժ բողբոջներով գրկելով երիտասարդ պատկերահանը, աղաղակեց, «Ո՞րքեակ, ես այլ ևս չեմ նկարեր»: Այդ երիտասարդը, լէտնարտոյ տա վինչի, նկարեց «Վերջին լնթիւքը», որոյ աւերակը, հիմա երեք հարիւր տարի ետքը, տարուէ տարի արուեստի սիրահարները հարիւրաւորներով կը քաջէ Միլանի աննշան մէկ վանքին սեղանատունը:



ՄԷՌԼ ՏՕՊԻՆԵՆԷ

ՄԷՌԼ ՏՕՊԻՆԵՆԷ

Այս թերթին առաջին երեսին վրայ կը տեսնէք չէնքի մը պատկերը, հոս ալ կը տեսնէք Բարեկարգութեան Պատմութեան հեղինակին պատկերը, և այն տանն ուր ծնաւ նա 1794, Օգոստ. 16ին: Իւր տունն է Օ Վիլ վիլ գիւղին մէջ որ մօտ է ձինեվրայի: ՏՕպինեէ սերունդ է այն Գաղիացի Բողոքականաց որ ապաստանած էին ձինեվրայ հայրենեաց մէջ իրենց կրած հալածանքին երեսէն: Անոր հայրը որոյած էր որ վաճառական ըլլար իւր որդին, բայց ՏՕպինեէ ընտրեց Աւետարանի պաշտօնէութեան գործը ձինեվրայ այցելող Սկովտիացի քարոզչէ մը յորդորուելով: Պերլին գնաց իւր դաստիարակութիւնը կատարելագործելու համար, և հոն աշակերտեցաւ հռչակաւոր եկեղեցական Պատմագրին, Նէանտրիի: Ժամանակ մը դուրսը քարոզելէ ետքը նորէն դարձաւ ձինեվրայ, և աստուածաբանական ճեմարանին մէջ կարգուեցաւ Բրոֆէսոր եկեղեցական պատմութեան: Շարունակեց իւր աշխատութիւնները զորաւոր մտքով և քայտաօղջ մարմնով, մինչև իւր յանկարծական մահը 79 տարեկան հասակին մէջ:



ՏՈՒՆ ՈՐԻՆԵԱՒ ՄԷՌԼ ՏՕՊԻՆԵՆԷ

տեսած են: Անդրիերէն թարգմանութենէն գէթ 200,000 օրինակ ծախուած է Անգղիա, և 400,000 Միացեալ Նահանգաց մէջ: ՏՕպինեէ գրեց նաև կալվինի ժամանակին բարեկարգութեան պատմութիւնը որ դեռ բոլորովին չէր աւարտած անոր մահուան ատենը: Իւր գործերն լի են կենդանի և վառվռուն նկարագրութիւններով, և մեծապէս կը գրաւեն ընթերցողին ուշադրութիւնը: Բայց նա երբեմն բուն իւր երևակայութիւնը կը դործածէ երբ իւր պատմութեան մանրամասն նկարագրութեանց կը մտնէ, և միշտ իրաւունք չընեն Բարեկարգութեան հակառակորդաց: Բայց արժա-

նապէս բուռն է անոր գրած պատմութեան համար. «Մեծաւ մասամբ մօտ կը բերէ զմեզ աներկբայ ուղղակի ֆրիսանէական եկեղեցւոյ արդի պատմութեան ամենէն ծանրակշիռ ժամանակամիջոցին հարազատ ոգւոյն»:

ԿՕՇԿԱԿԱՐ ՊԷՆԻ ՄՏԱԾՈՒԹԻՒՆԸ

Կոչկակար Պէն արագ արագ կը քաջէր իւր մտած տաղանին (դերձան), նոյն ժամանակ ինքնիրեն մեղմով սուլելով, և խորհուրդները կ'երթային իւր սուլելու ձայնին: Ճիշդ նոյն ատեն մարդ մը դուռը բացաւ որով արեգակին ճառագայթը խանութիւն մէջ ցոլացաւ: Այս մարդն էր քարոզիչը:

«Քսան վայրկեան կանուխ եկաք, Տէր իմ», ըսաւ Պէն, վեր նայելով ժպտուն դէմքով մինչ քարոզիչը կը մտնէր դռնէն ներս: «Բայց կոչիկներդ շինուած պատրաստ են. ես կը ջանամ որ եթէ կարելի է խոստացուած ժամանակէն առաջ յանձնեմ կոչիկները յաճախորդներուս սակայն դեռ քսան վայրկեան ևս ժամանակ կայ, տես», ըսաւ, նայելով իւր ժամացոյցին վրայ որ մօտը կախուած էր: «Գուք այս ժամացոյցին համեմատ կը դործէք, այն պէս է», ըսաւ քարոզիչը: «Բայց շետակ կ'երթայ այդ»: «Անշուշտ», ըսաւ Պէն, պարծենկոտ ձայնով մը: «Գիւղի» բնակչաց կէտը ասոր վրայ կը

չտկեն իրենց ժամացոյցները : Կինս կ'ըսէ թէ ես արևը կը չտկեմ ասով : Նայէ՛, Տէր,՝ ըսաւ ցատկելով որպէս զի վար առնուր ժամացոյցը, «ասա ճիւնեկը այն ընտիր գործն է այն, զո՛հարնեբով զարգարուած : Հայրս տուաւ զայն ինձ ծննդեանս քսանեւեկերորդ տարեդարձին, և այս անցեալ ամբողջ տասնուհինգ տարուան մէջ բնաւ աւրած չէ :

Քարոզիչը ձեռքն առաւ ժամացոյցը և անոր չորս կողմը նայեցաւ խնամով : «Պէն,՝ ըսաւ անոր ծանրութեամբ բայց կէս մը ժպիտ ցուցնելով իւր աչաց մէջ, «կարծեմ այս ժամացոյցը աղէկ չէր բաներ վերջերս, մանաւանդ Կիրակի օրերը :» «Կիրակին ի՞նչ ունի անոր հետ,՝ ըսաւ շփոթած կոչկալարը : «Գուք կ'ըսէք թէ բոլոր գործերդ ասոր համեմատ կ'ընէք, և ես գիտեմ որ Կիրակիօրեայ գործերու ժամանակ վերջերս ուշ կը մնայիք : Այնպէս չէ՞ :» «Եկեղեցի՞ն ըսել կ'ուզէք : Կը խոստովանիմ թէ ես մօտերս անհոգ գտնուեցայ այդ մասին : Ներսի դիս թիք թիք ձայնը անհանգիստ կ'ընէր զիս այն ժամանակէն ի վեր որ չեմ կատարեր այդ պարտականութիւնս,՝ ըսաւ Պէն, ակամայ ծիծաղով մը : «Այդ լաւ նշան է . ուրախ եմ որ խղճդ տակաւին չէ թմրած :» «Ոյ, Տէր, ես լրջութեամբ խորհած եմ ասոր վրայ, և համոզուած եմ թէ գործս աղէկ գացած չէ կանոնաւոր կերպով եկեղեցի չերթայէս ի վեր : Ինձ այնպէս կը թուի թէ մենք այս ժամացոյցիս պէս ենք և պետք ունինք լարուելու շարժման անգամ մը Աստուծոյ մօտենալով Կիրակի օրերը : Տակաւին դուք հոս մտած ես որոշած էի բռնել նոր ընթացք մը : Բան մը չէի ըսած որ և իցէ մարդու բայց միայն կնոջս և փոքրիկ դստակներուս, սակայն որովհետեւ հիմա կը խօսիք ասոր վրայ, չեմ կրնար ծածկել իմ խորհածս :»


«Շնորհակալ եմ,՝ ըսաւ քարոզիչը, «ուրախ եմ որ հոս եկայ : Գուք ալ օգնեցիք ինձ : Շատ յարմար խօսք էր որ ըսիք թէ մենք պէտք ունինք ժամացոյցի նման լարուելու : Ես այդ խօսքը պիտի ըսեմ քու դրացիներէդ ոմանց : Եւ այսուհետեւ պիտի սպասեմ տեսնել ձեզ որ կանոնաւոր կերպով ներկայ գտնուիք պաշտամանց ժամերուն ճիշդ ինչպէս որ ձեր ժամացոյցը կանոնաւոր կերպով կը ցուցնէ նոյն ժամերը :»

ՆԱԽՆԻ ՄԵՆԱՍՏԱՆՆԵՐԸ

Միջին դարուց մէջ ուսմանց գլխաւոր կեդրոններն էին մենաստանները (վանք), և որովհետեւ մենաստաններուն մեծ մասին հիմնարկութիւնը շատ կանուխ ժամանակ եղած է, անոնց մէջ շատ մը հին և յարգի գրութիւններ կը գտնուին : Ուսումնականաց երկայնամիտ հետազոտութիւնները իրոյս բերած են այս գրական հարստութեան մեծ մասը : Թիչնետորֆ, Գերմանացի


գիտունը, 1859 ին Սինա լեռան վրայ շինուած Սբ. Կատարինէի մենաստանին մէջ գտաւ Նոր կտակարանին մէկ ցունարէն ձեռագիրը որ այժմուս ուրիշ որ և իցէ ձեռագիրէ աւելի հին է թերեւս բաց ի վատիկանի ձեռագրէն :

Մեր առջևի պատկերը կը ներկայացունէ այս նախնի մենաստաններէն մին, և կ'ըսուի թէ կը պարունակէ շատ մը հին ցունարէն ձեռագիրներ : Այն է Մար Սարայի, այսինքն Սբ. Սարայի մենաստանը, և շինուած է Հրէաստանի անապատին մէջ, ուր Յովհաննէս Մկրտիչ կը քարոզէր (Մատթ. Գ. 1) : Ծովը որ կ'երևի, Մեռեալ Ծովն է :



ԲԱՐԻ ՄԱՐԻՌԻ ՄԸ ՓԱՓՈՒԿ ԶԳԱՅՈՒՄԸ

Տղաք շատ անգամ կը խորհին թէ փափկասիրտ ըլլայն է տկար և կնամարդի ըլլալ : Բայց ամենէն փափուկ




ՄԱՐ ՄԱՐԻՌԻ ՄԵՆԱՍՏԱՆԸ

սիրտ ունեցողը կրնայ ունենալ նոյն ատենը նաև շատ զօրաւոր և շատ կորովի միտք և կամք : Օրինակի համար . մեր դիտողութեան առնունք ձործ Սթիֆընսըն որուն կը պարտի աշխարհ երկաթուղեաց զարմանալի գիւտը : ձործ Սթիֆընսըն օր մը ելաւ իւր տան վերի սենեակը և գոցեց անոր պատուհանը : Պատուհանը երկար ժամանակէ ի վեր բաց թողուած էր օդին սաստիկ տաք ըլլալուն համար . բայց այն ատեն օդը զովանալ սկսելուն պատճառաւ Մր. Սթիֆընսըն աղէկ սեպեց գոցել զայն : Սակայն երկու երեք օր ետքը, դիպուածով տեսաւ որ թռչուն մը այն նոյն պատուհանին կ'երթար կ'երթար կը զարնուէր բոլոր իւր ոյժով, իբր թէ ջանալով կոտրել զայն : Մր. Սթիֆընսընի համակրանքն և հետաքրքրութիւնն արթնցաւ : Ի՞նչ կրնար ըլլալ փոքրիկ թռչնոյն շարժառիթը : Իսկոյն վազեց սենեակը և բացաւ պատուհանը, և հա՛ն թռչունը ուղղակի թռաւ դէպ ի սենեակին մէջ

անկիւն մը ուր Սթիֆընսըն տեսաւ բոյն մը : Խեղճ թռչունը նայեցաւ անոր վրայ, և մէկ ակնարկով հասկցաւ թէ ինչ ցաւալի դէպք պատահած էր, և թռչտելով ինկաւ վար տախտակամածին վրայ սիրտը կոտրած և գրեթէ մեռած : Սթիֆընսըն մօտեցաւ բոյնին տեսնել թէ ինչ կարև իւր սիրտը լցուցաւ աննկարագրելի վիշտով : Հոն բոյնին մէջ կը նստէին մայր թռչնիկը, և իւր ներքեւ չորս փոքրիկ ձագեր, թէ մայրը և թէ ձագերը մեռած երևոյթով : Սթիֆընսըն լացաւ բարձրաձայն : Փափկութեամբ տախտակամածին վրայէն առաւ վերցուց մարած թռչունը որուն բերանն էր տակաւին ճճին զոր երկար ժամանակէ հետէ աշխատած էր բոյնը տանիլ ձագերուն, և խնամով ջանաց վերստին կենդանացունել զայն, բայց պարապ

եղան իւր բոլոր ջանքը և աշխատութիւնները : Շուտով մեռաւ թռչնիկը, և այն մեծ մարդը սուգ պահեց շատ օրեր : Մի և նոյն ժամանակ ձործ Սթիֆընսընի մասաց ոյժը կը փոխէր երկրիս երեսին կերպարանքը, և սակայն լացաւ նա տեսնելով այս թռչնոյ ընտանիքին վիճակը, և խորապէս տիրեցաւ վաճառի ինքն անձամբ յանգէտս պատճառ եղած էր մահուան :



ԵՐԱԶԻ ՄԸ ԱՐԻՒՆԻՔԸ

Ճամանակաւ մեքենագործ մը կար Անգղիոյ Պրիսթոլ քաղաքին մէջ, որոյ անունն էր Ուոթս : Անոր արհեստն էր հրազէնքի մանր կապար գնտակներ շինել : Ուոթս նախկառնուր կապար մեծ ձողեր, և ծեծելով զանոնք տախտակներու ձև կու տար անոնց մինչև այն թանձրութեամբ որչափ կ'ուզէր ընել գնտակին տրամագիծը : Այնուհետեւ տախտակները կը կտրէր փոքրիկ խորանարդներու ձևով, և զանոնք կը ընուր թաւալող գործիքի մը մէջ մինչև որ անոնց անկիւնները մաշէին շարունակ շփուելէն : Ամերիկեան լրագիր մը այսպէս կը պատմէ պատմութեան մնացած մասը . «Ուոթս երկուց մը զուարթ ընկերներու հետ գաւրեջրատան մը մէջ անցունելէն ետքը տուն գնաց և մտաւ անկողին : Երա-

զին մէջ տեսաւ որ դարձեալ կը գրտնուէր իւր ընկերաց հետ: Եւ ահա երկինքէն անձրևի նման կապար գընտակներ սկսան տեղալ, և այս պատճառաւ իրենք ամէնքն ալ կը ջանային իրենց տուններն երթալ ապաստանիլ: Կապարեայ գեղեցիկ գնտակներ, յըղկեալ և փայլուն, հեղեղներու պէս վար կը թափուէին: Առաւօտուն երբ Առոթն ելաւ անկողնէն, միտք բերաւ տեսած երազը, և կը մտածէր թէ արդեօք ինչ ձև պիտի առնուր հալած կապարը բարձրէն օդին մէջէն վար թափուելով: Ի վերջոյ շերեփ մը լեցուն հալած կապար առաւ և Ռէտը լիֆի Սբ. Մարիամու եկեղեցւոյն զանգակատունն ելլելով թափեց զայն վարը գտնուած խրամին մէջ: Վար իջաւ և մէջը ծանծաղ (ցած) ջուր պարունակող այն խրամին յատակէն ժողվեց քանի մը բուռ («չա՛ծ») կատարեալ գնտակներ, իւր անկէ առաջ տեսածներէն շատ գերազանց: Առոթնի հարստանալուն պատճառ եղաւ այս վասն զի շինեց գնտակներ թափելու աշտարակը, որ այն ժամանակէն հետէ կը գործածուի իրբև մի միայն միջոց շինելու այն փոքրիկ գնտակները որ այնչափ շատ կը գործածուին պատերազմի և որսորդութեան մէջ:



ԳՐԹԻԹԵԱՆ ԳՈՐԾ ԹՈՉՆՈՑ ՄԵՋ

Ամերիկայի Պրուքլին քաղաքին մէջ բնակող մարդ մը կը պահէ աղանձներ, որք անցեալ տարուան Մարտ ամսուն մեծ փոթորիկին ատենը յետին աստիճան նեղութիւն կրեցին օդին ցրտութեան երեսէն: Ելլը անոնց տէրը կարող եղաւ երթալ անոնց քով, գտաւ որ խեղճ թռչունները փայտ կտրած և անզգայացած էին ցրտէն: Տուն տանելով թռչունները, ջանաց կենդանացունել զանոնք սողուր կրակի մը քով: Ըրաւ այսպէս և յաջողեցաւ, և մինչ կը զբաղէր այն գործով, զարմացաւ լսելով ցած «փիփ, փիփ» ձայն մը որ կու գար անծանօթ կողմէ մը և չէր կրնար հասկնալ թէ ուրկէ՛ էր այն: Բայց երբ քննեց բանը, ահա իւրաքանչիւր աղանձոյ թևերուն ներքեւ կը գտնուէր փոքրիկ ճնճղուկ մը որ հոն ապաստանած էին փոթորիկին կատաղութենէն պատսպարուելու համար, և աղանձները բարեսիրութեամբ պահպանած էին զանոնք և տաքցուցած, այսպէս ցուցնելով թռչուններէ չակնկալուած ուշիմութիւն և բարեկամութիւն: Այն սաստիկ ցրտին ատենը շատ ճնճղուկներ ջարդուեցան: Կիրակիէն մինչև Չորեքշաբթի կամ Հինգշաբթի անոնք չունէին ոչ ու-

տեսաւ ոչ ջուր, և անոնցմէ միլիոնաւորներ մեռան ցրտէն և անօթութենէ:

ՃԱՄԲՈՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ

ԴԵՊ Ի ԱՐՈՒՍԵԱԿ ՄՈՂՈՐԱԿԸ

Վայրեան մը ենթադրենք թէ շինուած են քանի մը երկաթուղիներ, որոնցմէ մին՝ աշխարհիս շուրջը կատարեալ շրջանակ մը կը ձևացունէ և միւսները ուղղուած են դէպ ի Արեւազանային դրութեան մէջ այլ և այլ կէտեր: Ենթադրենք նաև թէ այս երկաթուղեաց վրայ երթևեկող կառախուսքը կարող են ժամը վախտուն մղոն ճամբայ կտրել որչափ ժամանակ որ ուզուի, թէ անով ճամբորդողները կրնան ապրիլ առանց ուտեստի և կամ կրնան գտնել առաւ ուտեստ, թէ անոնց մարմինները այնպէս կարգուած են որ կարող են տոկալ օդին զանազան փոփոխութեանց, ջերմութեան աստիճաններուն և կլիմայի ուրիշ պարագաներու որոց թերևս ենթակայ պիտի ըլլան: Մեր այս երկնային երկաթուղեաց վրայ ճամբորդողները որպէս զի այցելէին միջոցին մէջ գետնուղ միայն քանի մը ամենէն մերձաւոր մարմիններուն, պէտք էր ունենային շատ երկար կեանք: Եթէ անոնք ճամբայ ելլէին երթալ Արեւազանային դրութեան հեռաւոր մէկ կողմը, ամէնքն ալ պիտի մեռնէին դեռ իրենց ճամբորդութիւնը գրեթէ չսկսած: Ճամբորդութիւն մը դէպ ի լուսինը, Արուսեակը կամ Հրատ մարտակը, վերոյիշեալ պայմանաց տակ պիտի ըլլար կարելի, բայց կարելի պիտի չըլլար դրութեան մէջ գտնուող դէպ ի ուրիշ որ և իյէ մարմին մը: Դէպ ի լուսինը ճամբորդութիւնը՝ բաղդատապէս կարճ պիտի ըլլար: Լուսինը մենէ իբր 240,000 մղոն հեռաւորութիւն ունի: Ժամը վախտուն մղոն և առանց բնաւ կենալու ճամբորդելով՝ իբր 167 օրէն պիտի հասնի ճամբան դէպ ի լուսին: Բազդատելով ուրիշ երկնային մարմնոց մենէ հեռաւորութեան հետ, այս է գրեթէ ոչ ինչ բայց բաղդատելով մարդոց ճամբորդած տեղերուն հեռաւորութեանց հետ, արդարև շատ մեծ է: Հիմա երթանք դէպ ի Արուսեակ մարտակը որ լուսինէն ետքը մեր ամենէն մօտ դրացին է: Այս պիտի ըլլայ աւելի ստակալի ձեռնարկութիւն մը: Երկրիս վրայ մարդու մը ամենէն երկայն ճանապարհորդութիւնը իւր կենաց յոյժ փոքր մասը պիտի առնու: Մեր այս երևակայած երկաթուղեաց մէկուն վրայ

ճանապարհորդը կրնար երկրիս բոլոր տիքը շրջան մը կատարել երեք շաբաթուան մէջ: Կան մարդիկ որոց բոլոր ճամբորդութիւններն եթէ իրարու հետ գումարուէին, գումարը հաւասար պիտի ըլլար դէպ ի լուսինը ճամբորդութեան և մինչև անգամ անկէ աւելին ալ: Բայց դէպ ի Արուսեակ ճամբորդութիւն մը շատ տարբեր բան է: Արուսեակը երբ մեզի ամենէն մօտ գրեքին մէջ կը գտնուի, մենէ իբր 26,000,000 մղոն հեռաւորութիւն ունի. կամ առանց կենալու ժամը վախտուն մղոն երթալով, ոչ թէ երեք շաբաթ կամ վեց ամիս, այլ յետոյ քաջ պէտք է անոր հասնելու համար: Երևակայուած երկաթուղեոյն վրայ հրնար էր կատարել այսպիսի ճամբորդութիւն մը, վասն զի կը գտնուին շատ մարդիկ որ յիսուն տարեկն աւելի կ'ապրին: Բայց իրական կեանքին մէջ ոչ ոք երբեք ճամբորդած է և ոչ ոք երբեք պիտի ճամբորդէ այսչափ հեռաւորութեամբ տեղ: Մարդկային էակ մը երբեք ճամբորդած չէ 5,000,000 մղոն, և աներկբայ կրնանք ըսել թէ ոչ ոք երբեք պիտի ճամբորդէ այդչափ հեռի տեղ: Այսպիսի ճամբորդութիւն մը կատարելու համար մարդ միջին հաշուով տարին 500,000 մղոն անընդհատ ճամբորդելու է յետոյ տարի: Թերևս գտնուին ոմանք որ իրենց բոլոր կեանքին մէջ ճամբորդած ըլլան 1,000,000 մղոն, բայց հաւանականապէս այսպիսիք յոյժ հազուագիւտ բացառութիւններ են: Ուստի կը տեսնենք որ մարդոց մէջ ոչ ոք երբեք ճամբորդած է Արուսեակին հեռաւորութեան յոյժ փոքր մէկ մասէն աւելի: Այսու ամենայնիւ այս աստղը արեգակնային դրութեան ուրիշ մարմնոց հետ բաղդատուելով՝ կրնայ կոչուիլ մեր շատ մօտիկը եղող դրացի մը:

ՊԱՏԱՍԻԱՆ ՀԱՆՆԼՈՒԿԻ

Փետրուար ամսոյ հանելուկին պատասխանն է հետագայն.

Հ	Ա	Մ	Ա	Ն
Ա	Բ	Ա	Ն	Ա
Մ	Պ	Պ	Յ	
Ա	Ն	Ա	Ի	
Ն	Ա	Յ	Ի	Ն

Ընդունած ենք ճիշդ պատասխանները Կ. պոլսէ, Ռոստոմոյէ, Պարտիզակէ, Մուրաշայէ, Գրեճլարէ, Տիգրանակերտէ, բայց պատասխան զեղծներուն անունները շատ ըլլալուն պատճառաւ տեղոյ անձկութիւնը արգելք եղաւ զենէլ զանոնք հաս:

Ամերիկայի Միսիսիպիք ընկերութեան կողմէն,
Արտոնաւոր ձ. Գ. ԿԻՆ
Տնօրէն—Խմբագիրը Չ. Ս. ՊԱՐՆԸՄ
Ֆինանսները եօտնուէր Ամերիկացի Խան:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՌԱ ՊՅՈՍՏԱՆԿՆ